ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 նոյեմբերի 2025թ. թիվ 709-Ա

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՎԱՆԻ Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆԻ
ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» թիվ 181-Ն որոշման հավելվածի 6-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2025 թվականի նոյեմբերի 7-ի թիվ 700-Ա որոշումը և հաշվի առնելով Ն.Հարությունյանի համաձայնությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Մինչև մրցույթի արդյունքում տնօրենի ընտրությունը (նշանակումը) «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող նշանակել «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կրթական աջակցությունների և դաստիարակչական աշխատանքների համակարգող Նարինե Սամվելի Հարությունյանին:

2. «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ սահմանված տնօրենի լիազորությունների իրականացման համար Ն.Հարությունյանին տալ լրավճար «ՀՀ Լոռու մարզի Լեռնավանի Հ.Ավետիսյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի տարիֆիկացիոն ցուցակով հաստատված աշխատավարձի 30%-ի չափով:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի նոյեմբերի 11-ից:

Հ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՄԿՐՏՉՅԱՆ

2025թ. նոյեմբերի 11
ք.Վանաձոր